

**Գուրգեն ԿԱՐԱՊԵՏՅԱՆ
Քրիստինե ՍՈՂԻԿՅԱՆ**

*Երևանի Վ. Բրյուսովի անվան պետական
լեզվահասարակագիտական համալսարան*

**ՄՏԱՇԱՀԱՐԿՄԱՆ ԼԵԶՎԱԳՈՐԾԱԲԱՆԱԿԱՆ
ԱՌԱՆՁՆԱՀԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔԱՂԱՔԱԿԱՆ
ԽՈՍՈՒՅԹՈՒՄ**

Հոդվածի նպատակն է վերլուծել քաղաքական խոսույթը որպես մտաշահարկման առկայացման հիմնական լեզվական տիրույթ, պարզաբանել ժամանակակից քաղաքական խոսույթում կիրառվող մտաշահարկային ռազմավարությունները և լեզվական միջոցները, ինչպես նաև ներկայացնել դրանց ամենատարբեր մտային, հոգեբանական, հասարակական և մշակութային հայեցակերպերը:

Քանալի բառեր. *քաղաքական մտաշահարկում, լեզվական մտաշահարկում, խոսույթ, քաղաքական խոսույթ, քաղաքական հաղորդակցություն, գործարանական առանձնահատկություններ, մտաշահարկային լեզվական միջոցներ*

Մերօրյա աշխարհում կյանքի ընթացքի արագացմանը, հաղորդակցության և կապի ծավալների և միջոցների ավելացմանը զուգընթաց միջազգային և միջպետական հարաբերությունները ձեռք են բերել ավելի բազմաշերտ բնույթ: Քաղաքականությունը՝ որպես վերոնշյալ փոխհարաբերությունների առկայացման ասպարեզ, դարձել է դժվար վերլուծելի մի հարթություն, որտեղ միմյանց են բախվում անհատների, ժողովուրդների, իշխանությունների, պետությունների և անգամ ողջ տարածաշրջանների հետաքրքրությունները, շահերն ու տեսլականները:

Տեղեկատվության համատարած և արագ հասանելիության պայմաններում յուրաքանչյուր անձ քաղաքական զարգացումների և վայրիվերումների մասին իր տեղեկացվածությամբ անուղղակիորեն ազդում է քաղաքական որոշումների և քաղաքական իրադարձությունների ընթացքի վրա: Իսկ կապի համատարած հասանելիության շնորհիվ այսօր յուրաքանչյուր ոք կարող է քաղաքականության հարափոփոխ ասպարեզում իր կարծիքն ու կարիքները լսելի դարձնել:

Երկրի իշխանությունը, որի նպատակը միշտ չէ, որ ժողովրդի համար բարենպաստ կյանքի ապահովումն է, պատրաստ է գործարկելու ցանկացած լծակ քաղաքական որոշումներում բացարձակ մենիշխանություն ձեռք բերելու համար: Քաղաքական գործընթացների արդարացիությունն ապահովելու լավագույն միջոցը, իհարկե, մտաշահարկումն է՝ մանիպու-

յացիան, որը ամենավաղ ժամանակներից եղել է քաղաքականության ոլորտի ամենաառանցքային բնորոշումներից մեկը:

Շահադիտական իշխանության բուն նպատակը ժողովրդի տեղեկացվածության մակարդակի նվազեցումը և քաղաքացիների շրջանում տեղի ունեցող գործընթացների, ինչպես նաև դրանց արդյունքում ձևավորված իրականության մասին թյուր պատկերացում ստեղծելն է: Այս կերպ՝ իշխանությունները կխուսափեն ժողովրդի դիմակայությունից և հնարավորություն կունենան անխափան կերպով իրականացնել իրենց շահադիտական կառավարումը: Ինչպես դեռևս անտիկ ժամանակներում, այնպես և այսօր, այս նպատակի իրականացմանը միտված ամենահզոր միջոցը լեզուն է /Chilton, 2004/: Լեզվի հստակ կիրառությամբ՝ նպատակահարմար բառերի և արտահայտությունների ընտրությամբ, կոչական մեծ ներուժ ունեցող ոճական և ճարտասանական հնարների կիրառությամբ, օբյեկտիվ իրականությանը և սեփական գործողություններին հղում չանող շարահյուսական կառույցների գործածությամբ և այլ միջոցներով, բռնատիրական իշխանությունները լեզվականորեն շահարկում են մարդկանց աշխարհընկալումն ու իրականության ըմբռնումը՝ ապահովելու շարունակական հանրային ենթակայություն:

Պայմանավորված լինելով քաղաքականության ոլորտում տեղի ունեցող հանրային մտաշահարկման մեջ լեզվի՝ որպես հիմնական գործիքի շահադիտական կիրառությամբ՝ սույն հոդվածի նպատակն է դիտարկել քաղաքական խոսույթը՝ որպես մտաշահարկման առկայացման լեզվական տիրույթ, վերլուծել քաղաքական խոսույթում առկա մտաշահարկային ռազմավարությունները և դրանց իրականացման նպատակով գործածվող լեզվական կառույցները, ինչպես նաև բացահայտել վերջիններիս գործառության գործաբանական, մտային-հոգեբանական, հասարակական-մշակութային և մի շարք այլ առանձնահատկությունները:

Քաղաքականությունը հասարակական կյանքի այն տիրույթն է, որտեղ առկայանում է քաղաքական խոսույթը: Նմանապես՝ գիտական խոսույթը, կրթական խոսույթը և իրավական խոսույթը համապատասխանաբար նկարագրում են գիտության, կրթության և իրավական տիրույթները: Վան Դիյկը քաղաքական խոսույթը պարզապես սահմանում է որպես քաղաքական գործիչների խոսույթ՝ համարելով, որ «քաղաքականություն» եզրույթին ամեն քաղաքագետ կարող է տալ իր սեփական սահմանումը՝ այս կերպ հանգեցնելով եզրույթի բազմաբանակ մեկնությունների /van Dijk, 2002: 19-20/:

Նա նշում է, որ քաղաքական խոսույթը նախևառաջ բացատրվում է իր դերակատարներով կամ հեղինակներով, այսինքն՝ քաղաքական գործիչներով՝ շեշտելով, որ քաղաքական խոսույթի վերաբերյալ կատարված ուսումնասիրությունների մեծ մասը վերաբերում է քաղաքական գործիչների կամ քաղաքական հաստատությունների փոխշփումներին, օրինակ՝ նախագահների, վարչապետների, կամ կառավարության այլ անդամներին:

րի, խորհրդարանների և կուսակցությունների միջև հաղորդակցությանը /van Dijk, 1997: 12/:

Հիմնվելով Բառանովի և Շեյգալի քաղաքական հաղորդակցության սահմանումների վրա /Баранов, 2001, Шейгал, 2004/ Չուդինովը նկարագրում է այն որպես հաղորդակցություն, որը վերաբերում է քաղաքական խնդիրներին, ինչպես նաև հաղորդակցություն, որի սուբյեկտները քաղաքական գործիչները կամ քաղաքականության մասին գրող լրագրողներն են: Առավել լայն մոտեցմամբ՝ քաղաքական հաղորդակցությունն այն հաղորդակցությունն է, որը նվիրված է քաղաքական խնդիրներին կամ որում քաղաքական սուբյեկտները քաղաքական տեքստի հեղինակը կամ հասցեատերն են զուտ կառավարական, ոչ հանրային շրջանակներում /Чудинов, 2012, 2006/:

Վան Դիյկը, սակայն, նշում է, որ չնայած քաղաքական գործընթացներում իրենց խաղացած առանցքային դերին, քաղաքական գործիչները քաղաքականության ոլորտի միակ դերակատարները չեն: Նա կարևոր տեղ է հատկացնում նաև քաղաքական հաղորդակցության վերջնական հասցեատերերին՝ հանրությանը, ժողովրդին, քաղաքացիներին, լայն զանգվածներին և այլն /van Dijk, 1997: 13/:

Ուստի քաղաքական խոսույթի վերլուծության ժամանակ, ըստ Չուդինովի, յուրաքանչյուր առանձին քաղաքական տեքստ հարկ է գնահատել խոսույթի շրջանակներում, այսինքն՝ հաշվի առնել դրա ստեղծման և գործադրման հստակ հանգամանքները: Ըստ նրա՝ առանձնապես կարևոր են տեքստի հեղինակը և հասցեականությունը, դրա ստեղծման ժամանակը, վայրը և նպատակները, ինչպես նաև հեղինակի հաղորդակցական ռազմավարությունն ու մարտավարությունը: Այս մոտեցմամբ քաղաքական հաղորդակցության խոսույթային յուրահատկություններին անդրադառնալիս նա նկատում է, որ քաղաքական հաղորդագրությունը միշտ իր մեջ կրում է ոչ միայն տեղեկատվություն, այլև իրականությանը տրվող գնահատական: Եվ սա բացատրվում է նրանով, որ քաղաքական հաղորդակցության իրական նպատակը ոչ թե իրադրության օբյեկտիվ նկարագրությունն է, այլ հասցեատիրոջը համոզելը և նրան քաղաքական գործողությունների դրդելը /Чудинов, 2012/։ Այս հանգամանքի դիպուկ դրսևորումն ենք տեսնում նաև Սիմփսոնի և Մայերի կողմից դեռևս անտիկ դարաշրջանի հռետորների (Պլատոն, Յիցերոն, Արիստոտել) այն կարծիքի մեջբերման մեջ, թե քաղաքական գործիչները մշտապես գործածել են համոզիչ և մտաշահարկային ճարտասանությունը հանրությանը խաբելու և մոլորեցնելու համար՝ քաղաքական գործիչների և հաստատությունների նկատմամբ ավանդաբար և անգամ մինչ օրս տիրող հանրային անվստահության պայմաններում /Simpson and Mayr, 2010: 43/:

Քաղաքական հարաբերություններում, գործընթացներում, ինչպես նաև քաղաքական խոսույթում առկա հաղորդակցության մտաշահարկային առանձնահատկություններն էին, որ գրավեցին քաղաքական

խոսույթի վերլուծության տեսաբանների ուշադրությունը (վան Դիյկ, Մունի և Էվանս, Շեֆներ, Մեյլաթ և Օսվալդ, Ռիգոտտի, Թոմաս, Փոլ և Էլդեր, Լիսկովսկի, Օրուել և այլն):

Ռիգոտտին, օրինակ, հաղորդագրությունը համարում է մտաշահարկային, եթե «այն հասցեատիրոջ մտքում աղավաղում է աշխարհի մասին պատկերացումը՝ խաթարելու որոշում կայացնելու համար նրա ողջամիտ դատողությունը և ստիպելու ծառայել մտաշահարկողի շահին՝ սեփական շահին հետամուտ լինելու թվացյալության ներքո» /Rigotti, 2005: 68/:

Վան Դիյկը, շեշտելով գաղափարախոսության դերը քաղաքական խոսույթում, ասում է, որ «եթե կա հասարակական գործունեության մի տիրույթ, որը լի է գաղափարախոսությամբ, դա, իհարկե, քաղաքականությունն է»: «Եվ քանզի գաղափարախոսությունը սահմանվում է որպես կոնկրետ խմբի անդամներին հատուկ հիմնական համոզմունք, սա նաև նշանակում է, որ քաղաքական խոսույթն այն միջավայրն է, որտեղ վավերացվում է քաղաքական գործիչների գաղափարախոսական ինքնությունը /van Dijk, 2002: 22/:

Խոսելով մտաշահարկման մասին՝ վան Դիյկը սահմանում է այն որպես հաղորդակցական գործելակերպ, որում մտաշահարկողը փորձում է կառավարել այլ մարդկանց, սովորաբար իրենց կամքին և ցանկությունը հակառակ: Ըստ նրա՝ «մտաշահարկումը պայմանավորված է ոչ միայն իշխանական դիրքի առկայությամբ, այլ ենթադրում է նաև վերջինիս չարաշահում»: Նրա կարծիքով, մտաշահարկումը ենթադրում է խոսույթի միջոցով իրականացվող ոչ իրավաչափ ներագրում: Այս դեպքում մտաշահարկողները ներագրում են մարդկանց վրա՝ ստիպելով նրանց հավատալ ինչ-որ բանի կամ ձեռնարկել քայլեր, որոնք շահեկան են մտաշահարկողի համար և չեն բխում մտաշահարկվողի շահերից: Նա, հիմնվելով այլ տեսաբանների դիտարկումների վրա /Dillard, Pfau, 2002; O’Keefe, 2002/, նաև շեշտում է, որ մտաշահարկումը կարող էր նաև լինել իրավաչափ համոզական գործողություն, սակայն ընդգծում է, որ մտաշահարկման և համոզման գործելակերպերի միջև գոյություն ունեցող նկատելի տարբերությունն այն է, որ համոզման դեպքում խոսակիցները ազատ են հավատալու կամ գործելու ըստ իրենց ցանկության, անկախ նրանից՝ ընդունում են համոզող կողմի փաստարկները, թե՛ ոչ: Այնինչ մտաշահարկման դեպքում, ըստ վան Դիյկի, հասցեատերերն ավելի պասիվ դեր են խաղում. նրանք դառնում են մտաշահարկման զոհեր /van Dijk, 2006: 360/:

Մտաշահարկման իր ուսումնասիրության մեջ նա որդեգրում է եռաստիճան մոտեցում՝ դիտարկելով այն 1. հասարակական (քանի որ այն կապ ունի հասարակական խմբերի և դերակատարների միջև տեղի ունեցող շփման և իշխանության չարաշահման հետ), 2. իմացական/ճանաչողական (քանի որ մտաշահարկումը ենթադրում է ազդեցություն հաղորդակցման մասնակիցների մտքի վրա), և 3. խոսույթային (քանի որ մտա-

շահարկումը գործադրվում է գրավոր և բանավոր խոսքի և տեսողական հաղորդագրությունների միջոցով) /van Dijk, 1998, 2001, 2006/:

Առավել հետաքրքրական է վան Դիյկի կողմից մտաշահարկման ուսումնասիրության իմացական-ճանաչողական հայեցակերպը: Խոսելով մտաշահարկման՝ մարդու մտքի վրա ունեցած ազդեցության մասին, նա գտնում է, որ թե՛ խոսույթն առհասարակ, և թե՛ մտաշահարկային խոսույթը մասնավորապես, առաջնայնորեն ազդում են մարդու կարճաժամկետ հիշողության վրա, ինչի արդյունքում բառերը, նախադասությունները, արտահայտությունները, ինչպես նաև արտալեզվական ազդանշանները ընկալվում են որպես պատրաստի տրվող «իմաստներ» կամ «գործողություններ»: Նա շեշտում է, որ իմացական տեսանկյունից մտաշահարկումը որևէ արտառոց և գերբնական գործողություն չի պահանջում, այլ պարզապես կիրառում է խոսույթին բնորոշ ամենահիմնական գործընթացները: Եվ քանի որ կարճաժամկետ հիշողության մեջ խոսույթի ըմբռնումը ենթադրում է հնչյունային, ձևաբանական, շարահյուսական և բառիմաստային վերլուծության գործընթացներ, տարբեր լեզվական կառույցների միջոցով կարելի է այս կամ այն կերպ ազդել այդ շերտերից յուրաքանչյուրի վրա. օրինակ՝ ավելի հստակ, դանդաղ արտասանությունը, ավելի պարզ շարահյուսությունը և ավելի պարզ բառային միավորների կիրառումը օժանդակում են ըմբռնմանն ու հասկացմանը: Եվ ընդհակառակը. արագ, ոչ հստակ խոսքը, խրթին բառերով կազմված բարդ նախադասությունները, օրինակ՝ բժշկական խոսույթում, նպատակ ունեն անհասկանալի մնալու հիվանդների համար: Հետևաբար, այս դեպքերում հասկացմանն ու ըմբռնմանը խոչընդոտելը կրում է հստակ դիտավորություն:

Վան Դիյկը նաև նշում է, որ մտաշահարկումն առավելապես ուղղված է մարդկանց կողմից մտաշահարկողին ձեռնտու արձագանքի շարունակականության և տևականության ապահովմանը, և այդ պատճառով էլ մտաշահարկման վերջնական թիրախը, այնուամենայնիվ, երկարաժամկետ հիշողությունն է: Մտաշահարկման իմացաճանաչողական գործընթացները ենթադրում են, որ երկարաժամկետ հիշողությունը ոչ միայն պահպանում է սուբյեկտիվորեն մեկնաբանված անձնական փորձառությունը՝ որպես մտային կադապարներ, այլև այնտեղ պահպանվող առավել կայուն, տևական, ընդհանրական և հասարակայնորեն ընդունված համոզմունքները և գաղափարախոսությունները: Ըստ նրա՝ մտաշահարկային խոսույթի գլխավոր նպատակն է կառավարել մարդկանց հավաքական հասարակական պատկերացումներն ու համոզմունքները, քանի որ հենց դրանք են կառավարում մարդկանց վարքն ու խոսքը տևականորեն և բազմապիսի իրավիճակներում /van Dijk, 2006/:

Մեյլաթն ու Օսվալդը, տալով նմանատիպ սահմանում, նշում են, որ թեև մտաշահարկման ուսումնասիրության ժամանակակից մոտեցումներն առաջ են քաշել խոսույթը մտաշահարկային որակելու մի շարք

չափանիշներ, խնդիրը դեռևս շատ հեռու է լուծված համարվելուց: Ահա այդ չափանիշներից մի քանիսը՝

1. *Ճշմարտության խաթարում/պայմանականությունների խախտում,*
2. *խոսողի շահի առկայություն,*
3. *Հաղորդակցական նպատակի ոչ բացահայտ, այլ ծածուկ լինելը,*
4. *Սոցիալական անհավասարության նախապայմանը և*
5. *Մտաշահարկման դիրավորությունը /Maillat, Oswald, 2009: 349/:*

Ինչպես արդեն նշել ենք, լեզուն այն հզոր գործիքն է, որը, շահադիտական նկատառումների համաձայն, նպատակային գործածությամբ շրջանառվելով խոսույթում, իրականացնում է մտաշահարկային գործառույթ: Չիլթոնն ու Շեֆները գտնում են, որ քաղաքական գործունեության մեջ լեզուն մասնակցություն ունի իր բոլոր մակարդակներով և կողմերով՝ գործաբանական մակարդակ (շփումը խոսողի և լսողի միջև), իմաստաբանական մակարդակ (իմաստը, բառապաշարի կառուցվածքը), շարահյուսություն (նախադասությունների ներքին դասավորվածությունը), ինչպես նաև հնչյունական կողմ, որոնց համալիր դիտարկումն էլ կարևորվում է քաղաքական տեքստերի լեզվաբանական քննության գործում /Chilton, Schäffner, 2011/: Քաղաքական գործունեությունը չի կարող գոյություն ունենալ առանց լեզվի կիրառության, իսկ լեզվի դերը, մասնավորապես՝ դրա գործածությունը բառերի ընտրության ու ձևակերպումների իմաստով, քաղաքական գործիչների համար ունի ռազմավարական նշանակություն, որքան էլ որ վերջիններս ժխտեն այդ փաստը /Chilton, 2004; Chilton, Schäffner, 2011/: Նույն կարծիքին է նաև Օրուելը: Նա գտնում է, որ սխալ է կարծել, որ «լեզուն պարզապես բնական աճ է, այլ ոչ գործիք, որը մենք ձևափոխում ենք՝ ըստ մեր սեփական նպատակների» /Orwell, 1946/:

Քաղաքական նպատակներով իրականացվող լեզվական մտաշահարկման մեջ տեսաբանները առանձնացնում են մի շարք ռազմավարական քայլեր, որոնք իրականանում են ամենատարբեր լեզվաբանական կառույցների միջոցով: Վան Դիյկն, օրինակ, առանձնացնում է դրական ինքնաներկայացումը (positive self-presentation) և այլոց բացասական ներկայացումը (negative other-presentation)՝ որպես հասցեագրողի օգտին փաստերի վերապահորեն և կողմնակալ կերպով ներկայացման և բացասական իրադարձությունների և երևույթների մեղքը հակառակորդի վրա բարդելու տիպիկ միջոց: Այս երևույթը «քաղաքական բևեռացում» անվանելով՝ վան Դիյկն այն համարում է մտաշահարկային խոսույթի հիմնական ռազմավարություն /տե՛ս նաև Paul, Elder, 2006: 4/, որի շրջանակներում առանձնացնում է այնպիսի լեզվական միջոցներ, ինչպիսիք են.

- խոսքային մակրո ակտերը, որոնք շեշտում են «մեր՝ լավ» և «նրանց՝ վատ» կողմերը, օրինակ՝ մեղադրանք նրանց դեպքում, պաշտպանություն մեր դեպքում,

- բառապաշարի ընտրությունը (*դրական* բառեր ինքնաներկայացման և *բացասական* բառեր մյուս կողմին ներկայացնելու համար),
- շարահյուսական կառույցները՝ *ներգործական* և *կրավորական* կառույցների կիրառությունը որպես լեզվական միջոցներ, որոնք կիրառվում են համապատասխանաբար մտաշահարկող կողմի դրական գործունեությունը և հակառակ կողմի բացասական գործորդությունը մատնանշելու և պատասխանատվությունը քողարկելու համար,
- ռճական միջոցները և հնարները (չափազանցությունների (hyperbole) և մեղմասությունների (euphemism) գործածությունը դրական և բացասական իմաստներ արտահայտելու համար, ինչպես նաև փոխանունության և փոխաբերության կիրառությունը մտաշահարկող կողմի դրական և հակառակ կողմի բացասական հատկությունները շեշտելու համար),
- ձայնային և տեսողական արտահայտչամիջոցները (բարձր ձայնը կամ խոշոր և թավ գրվածքը դրական կամ բացասական իմաստների շեշտադրման համար) /van Dijk, 2006: 373; 2003/:

Նա առանձնացնում է մտաշահարկային ռազմավարության ևս մի միջոց՝ «մտաշահարկային նախատիպերը»՝ որպես հատուկ տիպի կեղծիքներ (fallacy), (օրինակ՝ հեղինակության կեղծիքը), որոնք դրդում են մարդուն հավատալ կամ կատարել որոշակի քայլեր. օրինակ՝ կաթոլիկներին դիմել, ասելով, որ Հռոմի Պապը հավատում է կամ խորհուրդ է տալիս որևէ գործողություն, կամ մուսուլմաններին դիմելիս շեշտել, որ Ղուրանը խորհուրդ է տալիս կոնկրետ գործողություն /van Dijk, 2006/:

Չիլթոնը՝ դիտարկելով մտաշահարկումը հաղորդակցական ակտերի հիմնական տեսությունների տեսանկյունից, առանձնացնում է քաղաքական ռազմավարության մի քանի օրինակ՝ հարկադրումը/պարտադրումը (coercion), օրինականացումն ու ապօրինականացումը (legitimization and deligitimization), ներկայացումն ու խեղաթյուրումը (representation and misrepresentation) /Chilton 2004; Chilton, Schäffner, 2011, տե՛ս նաև Simpson, Mayr 2010/։ Նա, ուշադրություն դարձնելով Գրայսի՝ քանակի, որակի, համապատասխանության և ձևի չորս սկզբունքներին, ինչպես նաև Հաբերմասի իմացաբանական շրջանակին ու վավերականության չորս պնդումներին, նշում է, որ վերոնշյալ քաղաքական մտաշահարկային ռազմավարությունները գործնականում փոխկապակցված են և որ ուղակիորեն ոտնահարում են խոսքային ակտի վերոնշյալ սկզբունքները։ Որպես այդ ռազմավարությունների ազդեցության հիմնական ոլորտ՝ նա առանձնացնում է նախ երկարաժամկետ գիտելիքը՝ անվանելով այն «շրջանակ» (frame) և սահմանելով որպես մի կառույց, որը «կապ ունի իրադրությունների ըմբռնման (conceptualization) և լեզվում դրանց արտահայտման հետ /Chilton, 2004/:

Մտաշահարկային քաղաքական խոսույթի իր վերլուծության մեջ նա նաև ուշադրություն է դարձնում այնպիսի առանցքային գործոնների, ինչպիսիք են խոսույթի դերակատարները, իրադարձությունները, ժամանակը, տարածությունը և հասարակությունը, իրականությունն ու բարոյականությունը և այլն, որոնք դրսևորվում են լեզվական արտահայտման միջոցով և որոնք առանցքային դեր ունեն իր նշած քաղաքական ռազմավարությունների լեզվական առկայացման գործում /Chilton, 2004/:

Մունին և Էվանսը, մեջբերելով Արիստոտելի՝ լսարանին համոզելու երեք հայտնի գործոնները՝ լոգոսը, պաթոսը և էթոսը, որտեղ լոգոսը բառերն են և հենց ինքը՝ փաստարկը, պաթոսը՝ էմոցիաները կամ էմոցիոնալ կապը կոնկրետ գաղափարի կամ խնդրի հետ, իսկ էթոսը՝ հասցեագրող անձնավորության անձի դերի ազդեցությունը, գտնում են, որ քաղաքական համոզումը, ինչպես համոզման մնացած բոլոր կերպերը, հենվում են վերոնշյալ երեք գործոնների վրա: Քաղաքական մտաշահարկման լեզվական միջոցների՝ նրանց կողմից առաջարկվող ցանկը քիչ է տարբերվում վերոնշյալ տեսաբանների ներկայացրած միջոցներից: Նրանք, ինչպես վան Դիյկը, քաղաքական համոզման ամենակիրառելի գործիքներից են համարում քաղաքական հակադրությունը՝ մեր և նրանց գործելակերպերի, քայլերի, ունեցած դերակատարության և նպատակների դրական և բացասական բևեռացումը: Առանձնացված այլ միջոցներից են եռամաս թվարկումը՝ նույն շարահյուսական կառույցի եռակի կիրառումը նույն նախադասության մեջ, որն, ըստ նրանց, բավականին հաճախ է հանդիպում մտաշահարկային տեքստերում, զուգահեռությունը, կրկնությունը, կրավորական կառույցները՝ որպես քերականության մակարդակի մտաշահարկային միջոց, դերանունների՝ հատկապես առաջին և երկրորդ դեմքերի դերանունների կիրառությունը, ինչպես նաև փոխաբերությունը, միջտեքստայնությունը և այլն /Mooney, Evans, 2015/:

Ջոնս ու Պիեչին էլ մտաշահարկային խոսույթին իրենց անդրադարձում երևան են հանում մտաշահարկային լեզվի կիրառության գործաբանական առանձնահատկությունները, ընդգծելով կանխենթադրույթն (presupposition) ու ներիմաստը (implicature) որպես լսարանին համոզելու և վերջինիս վրա ներազդելու միջոց, և վերոնշյալ լեզվական միջոցներին ավելացնում նաև ածականների՝ հատկապես համեմատական աստիճանի ածականների կիրառությունը, սեռական հոլովի կիրառությունը, ստորադասական կառույցները և հարցերը՝ տրված հաստատական կառույցների փոխարեն /տե՛ս Thomas et al, 2005/:

Խոսելով քաղաքական խոսույթում անզլերենի աղավաղված կիրառության մասին՝ Ջ. Օրուելն առանձնացնում է այնպիսի լեզվական կառույցներ, ինչպիսիք են «մեռնող» (գործածությունից դուրս եկող) փոխաբերությունները (*Dying Metaphors*), գործարկիչները կամ բայական «կեղծ վերջույթները (*operators or verbal false limbs*)», ցուցադրական առոգանությունն ու անիմաստ բառերը: «Մեռնող» փոխաբերությունների

շարքում նա առանձնացնում է այնպիսի բառեր և արտահայտություններ, ինչպիսիք են, օրինակ՝ hotbed, Achilles' heel, on the order of the day, stand shoulder to shoulder, ring the changes on արտահայտությունները, որոնք, ըստ հեղինակի, «մաշված փոխաբերությունների մի հսկայական կույտ են, որ կորցրել է ողջ զուգորդային ներուժը», և «պարզապես գործածվում է այն պարզ պատճառով, որ հնարավորություն է տալիս խոսողին խուսափել սեփական խոսքը ձևակերպելու համար արտահայտություններ հորինելու անհրաժեշտությունից» /Orwell, 1946: 255/: Նա նաև շեշտում է, որ այս արտահայտությունները հաճախ կիրառվում են առանց խոսողի կողմից դրանց բուն իմաստի գիտակցման: Գործարկիչները կամ «բայական կեղծ վերջույթները» կառույցներ են, որոնք խոսքը լցնում են հավելյալ վանկերով՝ վերջինիս հաղորդելով համաչափ արտահայտություն: Այս դեպքում հստակ իմաստ արտահայտող պարզ բայերը (օրինակ՝ kill, mend, spoil, break, stop) փոխարինվում են գործողության կամ երևույթի բուն իմաստը մեղմացնող արտահայտություններով, ինչպիսիք են, օրինակ, make contact with, be subjected to, give rise to, give grounds for, have the effect of, play a leading part (role) in, make itself felt, take effect արտահայտությունները: Նմանատիպ լեզվական կառույցները, որպես կանոն, ասվածին լրացուցիչ կարևորություն են հաղորդում: Մտաշահարկային լեզվական կառույցների այս կարգում Օրուելն անդրադառնում է նաև բայի ներգործական սեռի փոխարեն կրավորական սեռի կառույցների կիրառությանը:

Ցուցադրական առոգանությունը ենթադրում է այնպիսի բառերի կիրառություն, որոնք կանխակալ դատողությանը հաղորդում են գիտական անկողմնակալություն և արդարացնում այն: Հեղինակն անիմաստ բառեր է համարում այն բառերը (հիմնականում որակական ածականները), որոնք ցույց չեն տալիս որևէ հստակ որակական հատկանիշ, այլ երևույթին տալիս են չեզոք և վերացական որակում: Այս տիպին են պատկանում հատկապես արվեստի քննադատության մեջ կիրառվող խիստ վերացական բառերը, որոնց շարքում առանձնացնում է, օրինակ՝ sentimental, plastic, dead, natural միավորները /Orwell, 1946/:

Քաղաքական ճշգրտության (political correctness) ապահովման և քաղաքական մտաշահարկման նպատակով կիրառվող լեզվական հնարների ցանկը չի սահմանափակվում վերոբերյալով: Այստեղ կարելի է ավելացնել այնպիսի ոճական հնարներ, ինչպիսիք են, օրինակ՝ **կրկնությունը, բառախաղը, նույնաբանությունները, բաղաձայնույթը, ժարգոնային բառերի գործածումը, ընդհանրացումը, համեմատությունը** /Paul, Elder, 2006: 16/ և այլն:

Սահմանափակվելով մտաշահարկման խոսույթային-գործաբանական առանձնահատկությունների և դրանք իրականացնող մտաշահարկային լեզվական հնարների վերոնշյալ ուսումնասիրությամբ՝ կարևոր ենք համարում նշել, որ, ինչպես իրավացիորեն փաստում է վան Դիյկը,

նմանատիպ լեզվական կառույցները ինքնին մտաշահարկային չեն, այլ մտաշահարկային գործառույթ են իրականացնում որոշակի հասարակական/քաղաքական համատեքստում և հստակ գործաբանական հարաչափերի առկայության դեպքում միայն /van Dijk, 2006/: Իսկ տեքստը մտաշահարկային գործառույթ է իրականացնում իր լեզվական և գործաբանական առանձնահատկությունների փոխգործակցության շնորհիվ: Մտային ներազդման գործում կարևոր է ոչ միայն այն, թե ի՞նչ է ասվում, այլև այն, թե ո՞վ է ասողը և ովքե՞ր են լսողները, ի՞նչ հասարակական դիրք ունեն նրանք, հաղորդակցական ինչպիսի՞ պայմաններում և արտալեզվական ի՞նչ համատեքստում է ասվում խոսքը և այլն:

Լեզվական ներազդման այս մեխանիզմը բավականին խորթին կառույց է և անցնում է առկայացման բավականին բարդ ուղի: Լեզուն, լինելով վերացական համակարգ, մարդու մտքի վրա ներազդում է հաղորդակցման մեջ իր կիրառական առկայացման, այսինքն՝ խոսքի միջոցով: Արդյունքում ձևավորվում է այնպիսի մի խոսույթ, որում առկայանալու և գործարկվելու է մտաշահարկումը: Հետևապես կարելի է ասել, որ մտաշահարկումը (և հատկապես քաղաքական մտաշահարկումը) լեզվագործաբանական երևույթ է, որի իրացման գործում իր լուրջ դերակատարումն ունի ինչպես լեզուն, այնպես էլ վերջինիս կիրառությունը պայմանավորող և կանխորոշող խոսույթային-գործաբանական միջավայրը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Баранов А. Н. Введение в прикладную лингвистик. М.: Эдиториал УРСС, 2001.
2. Шейгал Е. И. Семиотика политического дискурса. М.: Гнозис, 2004.
3. Чудинов А. П. Дискурсивные характеристики политической коммуникации // *Политическая лингвистика*. Вып. 2 (40), М., 2012.
4. Чудинов А. П. Политическая лингвистика. М.: Флинта: Наука, 2006.
5. Chilton P. & Schäffner C. Discourse and Politics // *Discourse Studies: A Multidisciplinary Introduction*. London: Sage Publications, 2011.
6. Chilton P. Analyzing Political Discourse: Theory and Practice. London: Routledge, 2004.
7. Dillard J. P., Pfau M. The Persuasion Handbook: Developments in Theory and Practice. Thousand Oaks, CA: Sage Publications Inc., 2002.
8. Maillat D. and Oswald S. Defining Manipulative Discourse: The Pragmatics of Cognitive Illusions // *International Review of Pragmatics*, vol. 1, 2009.
9. Mooney A., Evans B. Language, Society and Power: An introduction (4th edition). New York: Routledge, 2015.
10. O’Keefe D. J. Persuasion: Theory & Research. Thousand Oaks, CA: Sage Publications, 2002.

11. Orwell G. Politics and the English Language. London: Horizon, 1946.
12. Paul R., Elder L. Thinker's Guide to Fallacies: The Art of Mental Trickery and Manipulation. USA, Foundation for Critical Thinking Press, 2006.
13. Rigotti E. Towards a typology of manipulative processes // *Manipulation and Ideologies in the Twentieth Century: Discourse, Language, Mind*, Amsterdam/Philadelphia: John Benjamins, 2005.
14. Simpson P., Mayr A. Language and Power: A Resource Book for Students. Abingdon: Routledge, 2010.
15. Thomas L., Wareing Sh., Singh I., Peccei J. S., Thornborrow J., Jones J., Language, Society and Power: An Introduction, London: Routledge, 2004.
16. van Dijk T. Discourse and Manipulation // *Discourse and Society*, vol. 17, Issue 3, Sage Publications, 2006.
17. van Dijk T. Ideology: A Multidisciplinary Approach. London: SAGE Publications, 1998.
18. van Dijk T. Multidisciplinary CDA: A Plea for Diversity // *Methods of Critical Discourse Analysis*. London: Sage Publications, 2001.
19. van Dijk T. Political discourse and Ideology // *Anàlisi del discurs polític*. Barcelona: Universitat Pompeu Fabra. IULA, 2002.
20. van Dijk T. What is political discourse analysis? // *Political Linguistics*. Amsterdam: John Benjamins, 1997.

Գ. ԿԱՐԱՊԵՏՅԱՆ, Կ. ՏՕԳԻԿՅԱՆ – *Лингвопрагматические характеристики манипуляции в политическом дискурсе*. – Цель статьи представить политический дискурс как главный языковой домен реализации манипуляции, исследовать разные манипулятивные стратегии, существующие в сегодняшнем политическом дискурсе, разные языковые средства, с помощью которых данные стратегии осуществляются, а также выявить его самые разные психологические и социокультурные особенности.

Ключевые слова: политическая манипуляция, языковая манипуляция, дискурс, политический дискурс, политическая коммуникация, прагматические характеристики, манипуляционные языковые средства

G. KARAPETYAN, K. SOGHIKYAN – *On the Linguo-Pragmatic Specificities of Manipulation in Political Discourse*. – The aim of the paper is to present political discourse as the major linguistic domain wherein manipulation is objectified, to elucidate the various manipulative strategies found in modern-day political discourse and the linguistic means through which public manipulation is instigated, as well as to expound the different mental, psychological, social, cultural aspects thereof.

Key words: political manipulation, linguistic manipulation, discourse, political discourse, political communication, pragmatic characteristics, manipulative lingual structures